ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՔՆՆՈՂ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնների խախտման դեպքերով վարույթների մասին տեղեկատվություն.

1)2025 թվականին հարուցված վարույթների ընդհանուր թիվը՝ 11, որից՝ փաստաթղթերը թերի լինելու հիմքով կարճված վարույթների թիվը՝ 1, կասեցված վարույթների թիվը՝ 1, համապատասխան որոշումների ընդունմամբ ավարտված վարույթների թիվը՝ 8, ընթացքում գտնվող վարույթների թիվը՝ 1.

2)2025 թվականին 1 որոշում ընդունվել է 2024 թվականին հարուցված վարույթի շրջանակում (դրա հետ կապված արդյունքները կներկայացվեն սույն գրության շրջանակում)

2) 2025 թվականին հարուցված վարույթներից 5-ը հարուցվել են պացիենտների, 2-ը՝ մահացած պացիենտների ընտանիքի անդամների, 1-ը՝ բուժաշխատողի դիմումի հիման վրա, 3-ը՝ Հանձնաժողովի նախաձեռնությամբ.

3) 2025 թվականին բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնների խախտման հաստատված դեպքերով վարույթների թիվը՝ 5 (խախտում կատարած բուժաշխատողների թիվը՝ 6[1]).

4) 2024 թվականին հարուցված և 2025 թվականին ավարտված բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնների խախտման հաստատված դեպքերով վարույթների թիվը 1 (խախտում կատարած բուժաշխատողների թիվը՝ 1).

5)2025 թվականի բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնների խախտման չհաստատված դեպքերով վարույթների թիվը՝ 3 (խախտումներ փաստերը չեն հաստատվել 3 բուժաշխատողի մասով).

6)ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշմամբ սահմանված էթիկայի կանոնների խախտման դեպքերը՝ որոշման հավելվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետ, 3-րդ կետի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ ենթակետեր, 4-րդ կետի 2-րդ, 5-րդ ենթակետ.

7)Հանձնաժողովի որոշումների հիման վրա բժշկական կազմակերպության գործադիր մարմնի կողմից բուժաշխատողի նկատմամբ կարգապահական

[1] Մեկ վարույթի շրջանակում քննվել է երկու բուժաշխատողի կողմից կատարված խախտման փաստերը

պատասխանատվություն կիրառելու դեպքերը՝ 2 («Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ՝ 2 բուժաշխատողի մասով).

8)Հանձնաժողովի որոշումների հիման վրա բժշկական կազմակերպության գործադիր մարմնի կողմից բուժաշխատողի նկատմամբ կարգապահական պատասխանատվություն չկիրառելու դեպքերը՝ 3 («Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ, Ա/Ձ Անդրեյ Ավոյան[2], «Բեգլարյան» բժշկական կենտրոն» ՓԲԸ, իսկ «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում տեղեկատվություն չի տրամադրել):

9) Հանձնաժողովի որոշումների բողոքարկումների թիվը՝ 2: Երկու դեպքում էլ որոշումներն անփոփոխ են թողնվել:

Հանձնաժողովը ստացել է նաև շուրջ 50 գրություններ (փոստային ծառայության և էլեկտրոնային փոստի միջոցով), որոնց սահմանված կարգով պատասխաններ են ուղարկվել, ներկայացվել պարզաբանումներ:

Հանձնաժողովն իր աշխատանքների ընթացքում վերհանված ոլորտային համակարգային նշանակության խնդիրների մասով ընդունված որոշումների հետ մեկտեղ գրավոր առաջարկություններ է ներկայացրել ՀՀ առողջապահության նախարարությանը, ինչպես նաև իր աշխատանքների ընթացքում վերհանված ընթացակարգային խնդիրների լուծման նպատակով մշակել և ՀՀ առողջապահության նախարարին է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2022 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 75-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» հրամանի նախագիծը, որը ներկայում շրջանառության փուլում է:

Միևնույն ժամանակ, Եվրոպայի խորհրդի աջակցությամբ գործարկվել է Հանձնաժողովի mec.am պաշտոնական կայքը, Հանձնաժողովի նախաձեռնությամբ բացվել է Հանձնաժողովի ֆեյսբուքյան էջը: Եվրոպայի խորհրդի հետ համատեղ ընթացիկ տարվա սեպտեմբերին անցկացվել է բուժաշխատողների շարունակական մասնագիտական զարգացման գործընթացում պարտադիր դարձած «Բուժաշխատողների մասնագիտական էթիկայի կանոններ» դասընթացի դասընթացավարների պատրաստմանն ուղղված հատուկ միջոցառում:

[2] Ա/Ձ Անդրեյ Ավոյանի մասով 2025 թվականին բուժաշխատողի մասնսգիտական էթիկայի կանոնների խախտման երկու որոշում է կայացվել